ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.041-90-90-99

<< 22 >> հոկտեմբերի 2020 թվական

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 03

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագիծը հաստատելու մասին :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագիծը՝ (այսուհետ՝ ՆԱԽԱԳԻԾ) համաձայն հավելվածի:

1. **Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի**

2. **կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.**

Նպատակային եվ գործառական նշանակության փոփոխություն

Սուրենավան համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները Չև 1				
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	2	3	4	5
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				

	Գյուղատնտեսական	0,06		
3	պտղատու այգի	0,06	Բնակավայրերի Հասարակական կառուցապատման	0,06 0,06
	Բնակավայրի հողերից՝	0,71		
1	Այլ հողեր	0,70	Բնակավայրերի Տնամերձ կառուցապատման	0,70 0,70
2	Այլ հողեր	0,01	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ. կապի (կապի կայան)	0,01 0,01

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-6 դեմ ձեռնպահ

Պ. Ադամյան

Վ. Ղազարյան

Կ. Մարտիրոսյան

Ա. Աբրահամյան

Լ.Նադարյան

Գ.Գրիգորյան

Համայնքի ղեկավար՝ Կ.Կարապետյան